Ա Ռ Ա Ր Կ Ու Թ Յ Ու Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱՅԱՆԴՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ ԹԻՎ 24, 25-Ն, 26 ԵՎ 27 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 24 որոշման մեջ չի գրառվել 2019 թվականին իրականացված գույքագրման օրն ու ամիսը:

Թիվ 25-Ն և 27 որոշումների մեջ հղում է կատարվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին, որն ուժը կորցրած է ճանաչվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով:

Թիվ 25-Ն որոշմանը կից ներկայացվել է նախորդ տարվա (ուժը կորցրած ճանաչված) որոշման թիվ 2 հավելվածը:

Թիվ 26 որոշման մեջ բացակայում է ավագանու անդամներից մեկի ստորագրությունը:

Կատարող Ս. Ավետիսյան
10.03.2020թ.